ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» համաձայնագրի և «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրության կնքման նպատակահարմարության վերաբերյալ

«Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսա-արդյունաբերական խմբի ընդլայնման՝ դրա կազմում Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները ներառելու նպատակով Համաձայնագրի նախագիծ էր մշակվել և քննարկվել 2011 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած հայ-բելառուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի, ինչպես նաև 2011 թվականի հոկտեմբերի 24-ից 28-ը Երևանում կայացած հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստի ընթացքում: Հայ-բելառուսական հանձնաժողովի՝ 2011թ. նիստի ընթացքում քննարկված ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում մի շարք հարցերի շարքում բելառուսական կողմը տեղեկացրել էր հայկական կողմին այն մասին, որ բելառուսական կողմը չի առարկում «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսա-արդյունաբերական խմբի ընդլայնմանը՝ դրա կազմում Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները ներառելու հաշվին և ռուսական կողմը քննարկման էր ներկայացրել հետևյալ անվանումով՝ «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի զարգացման մասին» համաձայնագրի նախագիծ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ին կայացած նիստի ընթացքում նշված՝ «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի զարգացման մասին» համաձայնագրի նախագծի կնքման առաջարկությանը համաձայնություն է տրվել ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 90-Ա որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները "Պաշտպանական համակարգերի" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբում ներառելու հարցով Հայաստանի Հանրապետության վարչապետը դիմումներ էր հղել Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահին: Սակայն Ռուսաստանի

Դաշնությունում նշված նախագծի համաձայնեցման գործընթացն ավարտվելուց հետո Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության կողմից առաջարկվում է պատրաստել փաստաթղթի լրիվ նոր տարբերակ և սահմանված կարգով նորից սկսել անհրաժեշտ բոլոր գործընթացները:

2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևանում կայացած հայ-բելառուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի և 2012 թվականի սեպտեմբերի 21-ին Մոսկվայում կայացած հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ բելառուսական կողմը և ռուսական կողմը միմյանց միջև կհամաձայնեցնեն փաստաթղթի նոր նախագիծը և այն կուղարկեն հայկական կողմին:

2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևանում կայացած հայ-բելառուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում բելառուսական կողմը հայկական կողմին իրազեկել էր այն մասին, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի անունից սահմանված կարգով նամակ է /09.12.2011թ. թիվ 206-Ա/ ստացվել ուղղված Բելառուսի Հանրապետության վարչապետին Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները "Պաշտպանական համակարգերի" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբում ներառելու հարցով:

Բելառուսի Հանրապետության ռազմարդյունաբերության պետական կոմիտեն ռուսաստանյան կողմից ստացած առաջարկությունների հիման վրա պատրաստել և պետական կառավարման հանրապետական մարմինների համաձայնեցմանն է ներկայացրել վերոնշյալի վերաբերյալ հետևյալը.

Բելառուսի Հանրապետության Նախագահի հրամանի նախագիծ "Միջազգային պայմանագրի նախագծի շուրջ բանակցություններ անցկացնելու և այն ստորագրելու մասին", Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև "Պաշտպանական համակարգեր" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000թ. փետրվարի 11-ի համաձայնագրում" փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" արձանագրության /այսուհետ՝ Արձանագրություն/ նախագիծ, "Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև "Պաշտպանական համակարգեր" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000թ. փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին" համաձայնագրի նախագծի առնչությամբ բանակցությունների անցկացման և դրա ստորագրման մասին" Բելառուսի Հանրապետության

նախարարների խորհրդի կարգադրության նախագիծ, "Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև "Պաշտպանական համակարգեր" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000թ. փետրվարի 11-ի համաձայնագրին /այսուհետ՝ Համաձայնագիր/ Հայաստանի Հանրապետության միանալու մասին համաձայնագրի նախագիծ:

Բելառուսական կողմը խոստացել էր մինչև 2012 թվականի ավարտը հայկական կողմին ուղարկել "Պաշտպանական համակարգեր" միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբում Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները ներառելու հարցով միջպետական գործընթացների ավարտի մասին: Եվ արդեն 2013 թ. հունվարի վերջին ռուսական կողմից /Ռուսաստանի Դաշնության ՌՏՀ դաշնային ծառայության միջոցով, գրություն՝ 18.01 2013թ./ ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցվել է բելառուսական կողմի կազմած վերոնշյալ Համաձայնագրի և Արձանագրության նախագծերը, որոնք բելառուսական կողմը 13.12.2012թ. N 05/1-584 գրությամբ ուղարկել էր ռուսական կողմին:

Դիտարկվող Համաձայնագրի նախագիծը մշակվել է՝ կարևորվելով Կողմերի պետությունների կազմակերպությունների միջև ավանդաբար ձևավորված գիտատեխնիկական, արտադրական, առևտրային և ֆինանսական կապերի պահպանման ու զարգացման ձգտումը: Կողմերը փաստաթուղթը մշակել են ղեկավարվելով Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում 1994 թվականի ապրիլի 15-ին ստորագրված արտադրական, կոմերցիոն, ֆինանսավարկային, ապահովագրական և խառը անդրազգային միավորումների ստեղծմանն ու զարգացմանն աջակցելու մասին միջկառավարական համաձայնագրով:

Դիտարկվող Համաձայնագրի նախագծի դրույթին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը միանում է 2000 թվականի փետրվարի 11-ին ստորագրված «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» համաձայնագրին և ամբողջ ծավալով իր վրա է կրում դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները: Նախագծի 2-րդ հոդվածին համապատասխան Կողմերը՝ կապված Հայաստանի Հանրապետության միանալու հետ լրացումներ և փոփոխություններ են կատարում «2000 թվականի փետրվարի 11-ին ստորագրված «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» համաձայնագրի մեջ և այդ

փոփոխություններն ու լրացումները ձևակերպվում են առանձին Արձանագրությամբ:

Նշված Արձանագրության դրույթների համաձայն Կողմերը՝ /Բելառուսի Հանրապետության կառավարություն, Ռուսաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության կառավարություն/ աջակցում են 2000 թվականի փետրվարի 11-ին ստորագրված «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» համաձայնագրին /Համաձայնագրին/ համապատասխան ստեղծված «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսա-արդյունաբերական խմբի զարգացմանը, այդ թվում՝ ընդգրկելով «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի կազմում Կողմերի պետությունների կազմակերպության մասնակիցներին:

Արձանագրության նախագծի 1-ին հոդվածով սահմանվում է այն փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Համաձայնագրի համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածներում: Ըստ նշված հոդվածներում կատարված փոփոխությունների, միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակից կազմակերպությունների կողմից խմբի ծրագրերի շրջանակներում արտադրվող ռազմական և երկակի նշանակության արտադրանքի (աշխատանքներ, ծառայությունների) փոխադարձ մատակարարումներն (իրագործումը) իրականացվում են դիտարկվող Արձանագրության մասնակից պետությունների օրենսդրություններով սահմանված կարգով:

Դիտարկվող Արձանագրության համաձայն Կողմերն իրենց պետությունների օրենսդրություններին համապատասխան կարող են աջակցել միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակից կազմակերպություններին անհրաժեշտ պետական աջակցության միջոցներ ստանալ խմբի կոնկրետ նախագծերն իրագործելու համար:

Ըստ Արձանագրության դրույթների, խմբի մասնակից կազմա-կերպությունները Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի պարտավորությունների առնչությամբ պատասխանատվություն են կրում միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի պետական գրանցման վայրի - Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Կողմերն ապահովում են մասնակից պետությունների օրենսդրություններին համապատասխան պետական գաղտնիք կամ պետական գաղտնիքներ համարվող, դրա իրագործման ընթացքում ստացված տվյալների պաշտպանությունը:

Դիտարկվող Համաձայնագրի, ինչպես նաև դիտարկվող Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան կազմված Արձանագրության հիմնական նպատակն է Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի զարգացմամբ

նպաստել ռազմական, երկակի ու քաղաքացիական նշանակության արտադրանքի համաշխարհային շուկայում բարձր տեխնոլոգիական և մրցունակ նմուշների ստեղծման ու արտադրության ուղղությամբ, ինչպես նաև նշված արտադրանքի գոյություն ունեցող նմուշների վերանորոգման և արդիականացման աշխատանքների (ծառայությունների) կատարման համար խմբի մասնակիցների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների գիտատեխնիկական, արտադրական, նորոգման և ներդրումային ներուժի առավելագույն օգտագործումը, որն էլ իր հերթին կնպաստի Հայաստանի Հանրապետության պաշտպանական ներուժի ամրապնդմանը:

Դիտարկվող Համաձայնագրի կնքումը բխում է Հայաստանի Հանրապետության շահերից, քանի որ Համաձայնագիրը իրավական հիմք է ստեղծում 2000 թվականի փետրվարիր 11-ի «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միացման համար, իսկ 2000 թվականի փետրվարիր 11-ի «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսա-արդյունաբերական խմբի ստեղծման մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արձանագրության կնքմամբ Հայաստանի Հանրապետության համար պայմաններ է ստեղծում մասնակցել արտադրական, գիտատեխնիկական և ներդրումային ներուժի հետագա ինտեգրման և առավել արդյունավետ օգտագործման, ինչպես նաև Կողմերի պետությունների արդյունաբերական համալիրների կոոպերացիոն կապերի բարձր մակարդակի ապահովմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» համաձայնագրի և «Բելառուսի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրության կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս.ՕՀԱՆՅԱՆ